ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 24» հոկտեմբերի 20 18 թ. N 175 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030 -Լ որոշումը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի,

2. Նախարարի տեղակալներին, նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատարին, նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին՝ ապահովել սույն հրամանով հաստատված հավելվածում նախատեսված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը:

3. Նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին՝ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 22-ը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2011 թվականի հունվարի 31-ի N 10-Ա հրամանով հաստատված հաշվետվության ձևին համապատասխան՝ նախարարության գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն ներկայացնել տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2018 թվականի գործունեության միջոցառումների իրականացման մասին:

4. Սույն հրամանի 2-րդ կետի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին:

5. Սույն հրամանի 3-րդ կետի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարության գլխավոր քարտուղարին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Հավելված
ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատարի
2018 թ. հոկտեմբերի 24-ի N
175-Ա հրամանի

Ծ Ր Ա Գ Ի Ր
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերը	**Պատասխանատու կատարողը**			**Կատարման ժամկետը**
		Նախարարի տեղակալ	**Ստորաբաժանումը, կազմակերպությունը**	**Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար**	
1. (112) Բուսաբուծության ճյուղի զարգացում	- Հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերմանն ուղղված պետական աջակցության ծրագրի իրականացում - Հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերմանն ուղղված պետական աջակցության ծրագրի իրականացում - Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղեն որոշ մշակաբույսերի տեղական սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրի իրականացում - Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծրագրի իրականացում - Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում՝ - Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում	Գ. Պետրոսյան Ա. Քամալյան	Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն	Ռ. Նազարյան	դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ դեկտեմբերի 1-ին տասնօրյակ դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ

Միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերը	Պատասխանատու կատարողը			Կատարման ժամկետը
		Նախարարի տեղակալ	**Ստորաբաժանումը, կազմակերպությունը**	**Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար**	
	- Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու և հատապտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում	Գ. Պետրոսյան Ա. Քամալյան	Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն	Ռ. Նազարյան	դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
2. (113) Խաղողագործության և գինեգործության ճյուղի զարգացում	- ՀՀ խաղողագործական շրջանների խաղողի տնկարկների քարտեզագրման աշխատանքների իրականացում՝ «Խաղողի տնկարկների կադաստրի» հիմնում՝ - Աշխարհագրական նշումով գինիների համակարգի լիիրավ կիրարկման խթանում՝ - Կոլեկցիոն այգու և ֆիլոքսերադիմացկուն սորտապատվաստակալների մայրուտի մշակում և պահպանում, կոլեկցիոն այգու լրացում նոր սորտերով - Խաղողի և գինու որակի բարձրացման խթանում՝ - Միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներին և մրցույթներին հայկական ընկերությունների մասնակցություն, միջազգային թիրախային շուկաներում հայկական գինիների ճանաչելիության բարձրացմանը միտված միջոցառումների իրականացում՝ - Աջակցություն ագրոպարենային ոլորտի մասնագիտական կարողությունների զարգացմանը՝ - Խաղողագործության և գինեգործության միջազգային կազմակերպությանը (OIV) Հայաստանի անդամակցությունից բխող գործառույթների իրականացում՝	Գ. Պետրոսյան Ա. Քամալյան	Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ Ագրովերամշակման զարգացման վարչություն Բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն	Զ. Մուրադյան Գ. Ղազարյան Ռ. Նազարյան	դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ

Միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերը	Պատասխանատու կատարողը			Կատարման ժամկետը
		Նախարարի տեղակալ	**Ստորաբաժանումը, կազմակերպությունը**	**Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար**	
3. (114) Անասնաբուծության ճյուղի զարգացում	- «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի իրականացում՝	Գ. Պետրոսյան Ա. Քամալյան	Անասնաբուծության և անասնաբուժության վարչություն	Լ. Տեր-Իսահակյան	դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
	- «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի» շարունակում		Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ	Գ. Խաչատրյան պաշտոնակատար	դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
4. (115) Սուբսիդավորման ծրագրերի իրականացում	- Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում՝	Գ. Պետրոսյան Ա. Քամալյան	Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն	Ի. Փանոսյան	դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
	- Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր		Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն	Ի. Փանոսյան	դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
	- Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի իրականացում		Ագրովերամշակման զարգացման վարչություն	Գ. Ղազարյան	դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
	- Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի իրականացում		Ագրովերամշակման զարգացման վարչություն	Գ. Ղազարյան	դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
5. (116) Գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագրի իրականացում	- Գյուղատնտեսական կոոպերատիվների շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված դասընթացների իրականացում: Նախատեսվում է իրականացնել շուրջ 25 դասընթաց:	Գ. Պետրոսյան Ա. Քամալյան	Գյուղատնտեսական կոոպերացիային աջակցության բաժին	Մ. Խաչատրյան	դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
			Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ	Գ. Խաչատրյան պաշտոնակատար	

Միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացմանն ուղղված քայլերը	Պատասխանատու կատարողը			Կատարման ժամկետը
		Նախարարի տեղակալ	**Ստորաբաժանումը, կազմակերպությունը**	**Ստորաբաժանման, կազմակերպության ղեկավար**	
6. (117) Գյուղատնտեսության խորհրդատվական ծառայությունների ծրագրի իրականացում	- Ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան խորհրդատվության տրամադրում գյուղացիական տնտեսություններին:	Գ. Պետրոսյան Ա. Քամալյան	Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ Գիտական և գյուղատնտեսության աջակցության կենտրոնների համակարգման բաժին	Գ. Խաչատրյան Պաշտոնակատար Մ. Աթոյան	դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ